

Մ. Ս. Բարսյունց

ԱՐՁԱԿԸ «ԱՆԻ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

1946—55 թթ., որոշ ընդմիջումներով, Բեյրութում լույս էր տեսնում «Անի» գրական-գեղարվեստական ամսագիրը, սփյուռքահայ անվանի բանաստեղծ և հասարակական գործիչ Վահե-Վահյանի խմբագրությամբ:

Մոտ մեկ տասնամյակ շարունակ «Անին» արձագանքեց սփյուռքահայ գրական-գեղարվեստական կյանքը հուզող հրատապ հարցերին, պրոպագանդեց արվեստը սնող վեհ ու առաջավոր գաղափարներ:

Իր հրատարակման առաջին իսկ օրերից «Անին»՝ սոցիալիստական ռեալիզմի գաղափարներին ընդհուպ մոտեցող իր հայացքներով, լայն արձագանք դնելով սփյուռքահայ առաջավոր մտավորականության շրջաններում: Նա կարողացավ իր շուրջը համախմբել մեծ թվով գրողների ու արվեստագետների, մանավանդ երիտասարդ սերնդից. դառնալով, այդպիսով, սփյուռքահայ առաջադիմական գրականության կազմակերպիչ օղակներից մեկը հետպատերազմյան տարիներին:

«Անին» նշանակալից դեր կատարեց նաև սփյուռքի և հայրենիքի կապերի ամրապնդման գործում, արտասահմանի հայ ընթերցողներին լայնորեն ծանոթացնելով սովետահայ գրականության և արվեստի նվաճումներին:

«Անին» իր էջերում, բնականաբար, չափածոյի հետ մեկտեղ մեծ տեղ է հատկացրել նաև արձակին: Նրա արձակը առավելապես բաղկացած է պատմվածքներից: Դա հասկանալի է միջակ ծավալի ամսագրի համար: Դրանցից բացի, ամսագիրը տպագրել է մեկ ամբողջական վեպ (Սմբ. Փանոսյան, «Որ մրրկավ էին դառված»), մի քանի հատվածներ վեպերից, Վահե-Վահյանի «Հարալեզներու հաշտությունը» հայրենական հուշերը, մեկ ամբողջական պիես (Պ. Մասիկյան, «Որբուհիին խաչը») և փոքր ձևերի մի քանի այլ գործեր՝ չհաշված օտար գրականություններից կատարված մի շարք թարգմանություններ: Ընդարձակ տեղ են գրավում «Անիում» և սովետահայ արձակագիրների գործերը:

Սփյուռքահայ արձակի հիմնական թեմաներից մեկը երկար ժամանակ մնաց հայկական եղեռնը: «Անիի» արձակի մի ստվար մասի թեման ևս հայկական եղեռնն է: Տարբեր մակարդակ ունեն այդ թեմայով դրված պատմվածքները: Հաջող գործերի կողքին կան և միջակ ու պատմվածքի գեղարվեստական մակարդակի չհասնող գործեր: Դրանց մի մասը հայերի զանգվածային կոտորածների ու արսորի տարբեր դրվագների պատկերներն են: Հեղինակները, քիչ բացառությամբ, իրենց այդ պատմվածքների նյութը վերցնում են Արևմտյան Հայաստանի այն դավառից (ու անգամ գյուղից), որտեղ իրենք ծնվել ու մեծացել են, և պատկերել են այն դեպքերը, որոնց ակամա վկան ու մասնակիցն են եղել:

Առաջինը, որ աչքի է ընկնում այդ կարգի գործերում, կոտորածի ու անլուր լուրջությունների նկարագրությունն է՝ հաճախ նատուրալիստական մանրամաս-

նություններով: Ոճրային դեպքերի թողած սարսուցուցիչ ազդեցությունն այն-
քան մեծ է, խոր ու ճնշիչ, որ երեք տասնամյակ անց էլ հեղինակներից շատ
քչերին է հաջողվում հղելությունից վեր բարձրանալ ու դերժ մնալ փաստերի
մերկ, իսկ հաճախ էլ նատուրալիստական նկարագրությունից:

Քննարկվող գործերից մի քանիսում հեղինակները պատկերում են նաև
հայերի դիմադրությունը, որ առհասարակ հղել է տարերային և կրել է ինքնա-
պաշտպանական բնույթ: Չնայած դիմադրության փորձերը պատկերելիս հե-
ղինակները ժողովրդին դուրս են բերում կրավորական վիճակից, այնուամե-
նայնիվ, գեղարվեստական հիշվող կերպարներ չեն ստեղծվում, մեծ մասամբ
սխեմատիկ են, անարյուն, թեև երբեմն հաջողվում է տալ սիրո, փոխադարձ
օգնության սրտաշարժ տեսարաններ: Այդ տեսակետից ուշագրավ է Մ. Տեր-
Ստեփանյանի «Դժոխքի ճամփան» պատմվածքում Միրիկի ու Վարդուշի անհղժ
սիրո ողբերգական պատմությունը:

Մ. Տեր-Ստեփանյանի պատմվածքն աչքի է ընկնում նրանով, որ դրսևի-
րում է գերմանական իմպերիալիստների մեղսակցությունը հայկական հեղե-
նին: Պատմվածքում տրված է գերմանական երկաթուղային ընկերությունում
աշխատող հայերի աքսորն այն բանից հետո, երբ արդեն օգտագործվել էին
հայ շինականների ֆիզիկական վերջին ուժերը:

Նկարագրելով «գերմանադրոշմ նրբութամբ» կատարվող այդ տեղահա-
նությունը, հեղինակը գրում է. «Ճնշող Չավուշ, իր վրանին առջև, վայրի տան-
ձենիի մը բունին հենած, ճերմակ պիսակներով իր կարմիր ու խոշոր թաշկինա-
կը ջղայնորեն շարժելով, ողջերթ կը մաղթեր մեզի: Ու երբ Զաքարին հետ կը
համբուրվեր անիկա, թաշկինակը տարավ աչքերեն ջրվիժող արցունքներուն:
Գոնե մարդկային կարեկից սիրտ մը կու լար մեր ետեքն... Քյուրդ-արարի մը
սիրտն էր ան... Մինչ գերման երկրաշափին դեմքեն արձանային ցրտություն
մը կը ճառագայթեր, սառեցնելով բոլոր հույսերը»¹:

Քուրդ և հայ շինականների բարեկամական ղգացմունքների նման արտա-
հայտությունների, իսկ ավելի հաճախ հայ-արաբական բարեկամության պատ-
կերման մենք հանդիպում ենք ամսագրում տպագրված այլ գործերում ևս

Պատմվածքների այդ շարքը չի սահմանափակվում հեղեղի տարիներով
միայն: Զգալի թվով արձակ գործեր պատկերում են հեղեղի վերապրող հայերի
ողբերգական վիճակը հետագա տարիներին: Այդ թեմայով գրված հաջող գոր-
ծերից են Ա. Անդրեասյանի ու Տ. Վարժապետյանի որբանոցային կյանքին
նվիրված պատմվածքները:

Ա. Անդրեասյանի «Ծնունդի երգը»² և «Երկու հղբայրները»³ պատմվածքնե-
րում նկարագրված են հուզիչ պատկերներ Հունաստանում տեղավորված ամե-
րիկյան որբանոցներում ապրող և «...անողոր բանտուպահներու քմահաճույթին
ենթարկված, կիսաքաղց ու զանակոծված հոգիներով թիապարտներու...»⁴ հայ
որբերի կյանքից: Առաջին պատմվածքում պատկերված է որբանոցի տղաների
ընդվզումը հույն ղինվորների սվինների պաշտպանությամբ տեղի ունեցող
կամայականության ու խոշտանգումների դեմ, երկրորդում՝ որբ տղաների

¹ «Անի», 1949, հ. 5—6 (29—30),

² Նույն տեղում, 1947, հ. 4 (16),

³ Նույն տեղում, 1950, հ. 6—7 (42—43),

աւրտաշարժ համերաշխությունն ու շոր, մարդկային զգացմունքներից զուրկ ամերիկյան տնօրենը:

«Անի» պատմվածքների մեջ զգալի տեղ է գրավում և սփյուռքահայ ժամանակակից կյանքն իր բազմապիսի կողմերով: Այդ պատմվածքներն աչքին են ընկնում, ամենից առաջ, իրենց պատկերած կյանքի անհեռանկարայնությամբ: Դրանց գեղարվեստական ճշմարտությունը կայանում է պատկերված կյանքի ժխտման մեջ, այն բանում, որ դրանք առաջ են բերում հակակրանք և ջնդրվում բուրժուական, սեփականատիրական կարգերի դեմ, և բողոքի զգացում՝ զաղթականական այդ վիճակի դեմ, որ ի վերջո նույնպես այդ աշխարհին հատուկ քաղաքական և դիվանագիտական խաղերի արդյունք է:

Սեփականատիրական աշխարհի տխուր բարքերն է պատկերում Անդր. Անդրեասյանի «Վերջին կայանը»⁴ պատմվածքը: Այն սկսվում է կենցաղային մի ոչ արտառոց դեպքով՝ կնոջ դավաճանությամբ, որի հետևանքով քայքայվում է երևութապես հունի մեջ մտած մի ընտանիք: Խաբված ամուսինը՝ Մանուկը թողնում, հեռանում է տնից: Նրեխաներ չկան ընտանիքում, և թվում է, թե ողբերգությունը դրանով կարող էր ավարտվել: Բայց ոչ. ողբերգությունը նոր է սկսվում: Մեկ անգամ հունից դուրս եկած և աշխատանքը կորցրած Մանուկն այլևս չի կարողանում հունի մեջ ընկնել. «Տագնապը ահռելի ուժգնությամբ զարկեր ու քայքայեր էր երկիրին տնտեսական կառուցվածքը: Փողոցներուն մեջ կը հանդիպեր իրեն նման թափառող բյուրավոր անգործներու, թափված ու մաշած հագուստներով: Անոնց չափիված դժգույն դեմքերը մոայլ ու ծերացած էին անհուսության, տանջանքի կամ ընդվզումի թախծագին արտահայտություններով»:

Դառն օրեր են սկսվում անգործ թափառող Մանուկի համար: Ընկնելով երկու ավազակների ծուղակը, Մանուկը դառնում է նրանց զոհ. բոլորովին միամտորեն ու ակամայից մասնակցելով հանցագործ մի ակտի, առաջնորդվում է բանտ: Բանտային տասնվեց տարուց հետո՝ նորից հին, թափառական անգործի վիճակը, «չարագործի» պիտակն էլ վրան: Քանի՜ անգամ Մանուկին հեռացնում են դժվարությամբ ձեռք բերած աշխատանքից՝ որպես նախկին «դատապարտյալի»:

Նա գործում է վերջին ճիգը, սովամահությունից ազատվելու համար գնում է ոստիկանատուն ու խնդրում, որ իրեն նորից բանտ ուղարկեն: Նրան բանտ չեն ընդունում, թե՛ օրենքն արգելում է առանց հանցանքի բանտ նետելը: Մանուկը անիծում է աշխարհը, այն աշխարհը, որ կրակով, սրով, անապատների ավազուտների միջոցով լափեց իրենց ողջ գերդաստանը և հիմա էլ կանգնեցրել է իրեն սովամահ լինելու դառն իրականության առջև:

Ուժասպառ, հիվանդ, աշխարհում ոչ մի կարելից չունեցող հուսահատ ծերունուն մի բան է մնում անել՝ հրաժարվել կյանքից, նզովելով աշխարհը և նրա անարդար օրենքները: Նա վերջ է տալիս իր կյանքին:

Ուրախ չի ընթանում նաև Բենիամին Նուրիկյանի «Առասպելական հսկան»⁵ պատմվածքի հերոսների կյանքը: Ահա Ակոր աղբարը, որ «...տարիներով մազ ու մորուք ճերմկացուցեր է միևնույն գործարանին առիթին տակ—ավելի միշտ ձեռքը, սայլակն ալ միշտ առաջըր»:⁶ Կամ Արմենը, որ «վազեր եկեր էր Ամերի-

⁴ «Անի», 1949, հ. 11 (35), էջ 56 և 12 (36)։

⁵ «Անի», 1950, հ. 3 (39)։

կա, երեք ծով ու երեք ցամաք կտրելով, ի խնդիր կաթիլ մը յուղի, իր հոգիին կանթեղին համար... Սիրտեն արյուն կը քամվեր ամեն օր, ու կը զգար թե այդ արյունը դինն է իր երազին»:

Նույնանման պատկերներ են բացվում ընթերցողի առջև և այլ արձակ դործերում: Կապիտալիստական դառն իրահանության մասին են խոսում Ստեփան Շահպազի մի քանի պատմվածքները: Այդ դառնությունն իր ծնողների հետ միասին ճաշակում է փոքրիկ Հերմինեն, որի մեղքը լույս «գարսոնի» աղջիկ լինելն է («Դատապարտյալ ծնողները»)՝⁶, անդործ և ուղեկորույս զավակների մայր, սպասուհի Մարիամը («Երկու մանչերու մայրը»)՝⁷, երիտասարդ փեսացուն («Մեռած մարդը»)՝⁸, որ հրաժարվում է իր հարսնացուից, որովհետև սակարանն ընկել է, ինքը սնանկացել: Հետաքրքիր են վերջինիս խորհրդածությունները փողի մասին. «Հոն..., զոր երկինք կը կոչեն, կապրին եղեր առանց դրամի, բայց հոս, վարը, հողին վրա, հոս՝ ծաղիկներուն ու մարդոց մեջ, աղջիկների և կիներու հետ, դրամը կյանքն է, կյանքը դրամն է... Դրամ ենք դուն ալ, ես ալ: Առանց դրամի ոչնչություն կա միայն: Աշխարհը խավար է առանց դրամի»:

Տրդատը, սակայն, դրանց մեջ «բախտ» ունի (Ստ. Շահպազ, «Տրդատին բախտը»)՝⁹, որովհետև փող ունի: Բայց ո՞ր մարդը կնախանձի նրա «բախտին», ո՞վ կհամաձայնի տիրանալու այդպիսի բախտի, երբ դրա գինը սիրուց, դեղեցկից և մարդկային վեհ զգացմունքներից հրաժարվելն է:

Նախանձելի չէ նաև Արտաշեսի ճակատագիրը՝ Լ. Դարբինյանի (Իրան) համանուն պատմվածքում¹⁰: Ողբերգական կամ արտառոց ոչինչ տեղի չի ունենում նրա միալար, որն է հետաքրքրությունից զուրկ տաղտուկ կյանքում: Բայց այդ տաղտուկությունն ինքը ողբերգություն է, որ զգում է շարքային ծառայող Արտաշեսը: Տասնյակ տարիներ մի կտոր հացի համար հավատարմորեն ծառայելուց հետո, կյանքի վերջում շատերի նման նա ևս հանգում է այն եզրակացության, թե «գործատերը կեղծ բարեպաշտության մեջ է փարում եկեղեցուն, կրոնին: Խոսում է նա մարդկային իրավունքներից, արդարամտությունից, սակայն այդ պիտակի տակ թաքցնում. դիվային ծրագրեր է որոճում՝ ուրիշների աշխատանքի ու զրկանքի գնով իր միլիոնները բազմապատկելու»:

Մերձավոր Արևելքի հայ աշխատավորների կյանքից ոչնչով չի տարբերվում և Ֆրանսահայերի, առնվազն նրանցից շատերի կյանքը: Ամսագրում Ֆրանսահայերի կյանքն է պատկերում իր մի քանի պատմվածքներում Զարեհ Որբունին: Բնորոշ է նրա Արմենը՝ «Օտարականը»¹¹ պատմվածքում: Նա եղեռնի տարիներին կորցրել է ծնողներին, մանկությունն անց է կացրել որբանոցում, ուր «հիվանդությունը պղտիկներին ուռեցնելով կը մեռցներ»: Տարիներ հետո նա կարողացել է ստեղծել իր օջախը, ունենալ իր փոքրիկ ընտանիքը: Բայց, այնուամենայնիվ, երջանկություն չի գտել: Անգամ իր սեփական տանը նա իրեն միայնակ, օտարականի պես է զգում, որովհետև երազ չունի, կյանքը դեռ մանկուց նրանից խլել է մարդկային երջանկությունը երազելու

⁶ Նույն տեղում, 1946, հ. 8--9.

⁷ Նույն տեղում, 1949, հ. 4 (28).

⁸ Նույն տեղում, 1950, հ. 8 (44).

⁹ «Անի», 1948, հ. 12 (24).

¹⁰ Նույն տեղում, 1955, հ. 5 (65).

¹¹ Նույն տեղում, 1947, հ. 1 (13).

իրավունքը: Երազելու ուրախությունը նա չի վերագտել և իր նոր շրջապատում: Ու նա մենակ է և ապրում է հոգեկան այդ մենության ողբերգությունը: «Ես մի-նակ եմ, և իմ մեջս ոչ մեկ երազ կա...»:

Այանքի դժվարությունների տակ կբաժ և ըստ էության անհեռանկար մարդիկ են Զ. Որբունու մի քանի այլ պատմվածքների գործող անձինք: Տխուր է նրանց կյանքը, միօրինակ ու ձանձրալի, ամենօրյա հոգսերի ու ապրումների տաղտուկ ցանցում կաշկանդված: Ոչ մի հետաքրքրություն՝ դեպի հասարակա-կանը, հանրայինը, շրջապատը:

Այդպիսին է շարքային մարդկանց կյանքը: Բայց ավելի ուրախալի չէ նաև մտավորականների վիճակը, որ նկարագրում է նույն Զ. Որբունին իր «Օրա-գրում», իր իսկ կյանքի օրինակով:

Սփյուռքահայ արձակի կարևոր թեմաներից մեկը ծուլման կամ, ինչպես երբեմն գործ են ածում արևմտահայերը, ուժացման պրոբլեմն է, որը ևս իր արտացոլումն է գտել «Անի» արձակում: Այդ պրոբլեմին ամենից ավելի անդրադարձել է Տիգրան Վարժապետյանն իր պատմվածքներում, որոնց նյութը նա վերցրել է առավելապես ամերիկահայ կյանքից: Այդ գործերից են «Քրիմանջարո», «Աղբյուր, գիտե՛ս», «Մյուս ափը» պատմվածքները: Ավելի ուշագրավը վերջինն է, որտեղ բախվում են երկու աշխարհ՝ արևելյան—հայկա-կանն իր աղգային-տոհմիկ հոգեբանությամբ ու ավանդություններով, և արև-մուտյան—ամերիկյանն իր շոր հաշվենկատությամբ, եսասիրությամբ, երբ մարդն իր սեփական բարեկեցության ու հանգստի համար ոչ միայն իր ժողո-վրդից ու լեզվից է հրաժարվում, այլև ուրանում է հարազատ մորն անգամ:

Լավը, դրականը՝ այդ պատմվածքների մեջ այն է, որ նրանցում չկա ու-րիշ ժողովուրդների արժանապատվությունը նսեմացնող, հայկականը ուրիշ ազգերից վեր դասելու տենդենց: Պատկերվածը ողբերգական ճակատագիրն է հայ ժողովրդի այն զավակների, որոնք, իրենց կամքից անկախ, ընկնելով օ-տար միջավայր, տեղի են տալիս և կամա թե ակամա հրաժարվում դարերից եկող և բաղում սերունդների ջանքերով սրբազործված մայրենի լեզվից ու մշա-կույթից:

Ինքնին հասկանալի է, որ այս պատմվածքները լավատեսությամբ չէ որ շնչում են: Դրանք գեղարվեստական պատկերների միջոցով արձանագրում են փաստերի իրական վիճակը, ընդգծելով երևույթի ժխտական հետևանքները: Երկրորդ պլանում, որպես ֆոն, քննադատվում է իմպերիալիստական քաղաքա-կանությունը, որ փոքր ժողովուրդներին իրենց դարգացման բնականոն հունից դուրս բերելով, ուղղակի կամ անուղղակի ճանապարհներով, պարտադրում է ուժեղի կամքը, լեզուն, սովորությունները, բարքերը:

Այլ է պատկերն ամսագրի այն գործերում, որոնց թեման հայրենիքն է ու հայրենադարձությունը: Այդ գործերի թիվը մեծ է ամսագրի թե՛ հայրենադարձի և թե՛ հետագա տարիների համարներում: Դրանցից յուրաքանչյուրը տողոր-ված է հայրենիքի սիրով ու կարոտով, լավատեսական է իր խորքով, հուսա-դրիչ է, ոգևորող:

Սովետական Հայաստանի գոյությունը, նրա իրականությունը ինքնավրս-տահություն է ներշնչում սփյուռքում ապրող հայերին, որոնք անբարյացակամ շրջապատում մնում են «եկվորի», «օտարի» գոյավիճակում, և եթե միշտ չէ, որ այդ բանը հիշեցնում են նրանց, ապա շարունակ մնում է հիշեցնելու վտան-գը: Այդ ինքնավստահությունը լավ է արտահայտված Միհրան Տեր-Ստեփան-

յանի «Արմինիան» կոնակս հ...»¹² պատմվածքում, որի հերոսն իր ամենից խոր հուզումը իր հիսնամյա կյանքում ապրում է այն պահին, երբ ունի կերպով զգում է, թե հայրենիք ունի և այդ հայրենիքը կարող է տեր ու պաշտպան կանգնել իրեն:

Հայրենիքի կանչը՝ ներգաղթի, խոր ներգործություն ունենալով ամբողջ սփյուռքահայության վրա, հիմք դարձավ իրական բազմաթիվ ստեղծագործությունների: Այստեղ չի կարելի չնշել այն ջերմ խոսքը, որ նվիրեց ամսագիրը հայրենիք ներգաղթողների առաջին քարավանին: Ժամանակը, գրում է «Անին»¹³, մնացել է ապշահար այդ երևույթի իմաստի ու ծավալի մեծության հանդեպ: Փոխվում է հայ ժողովրդի պատմությունը: «Սկիզբ կառնե պատմություն մը ուրիշ՝ որուն էջերուն մեջ արևը պիտի գա բնակիլ, և պիտի ըլլա անկաշողարձակ, ժպտուն, հպարտ»:

Ներգաղթի թեմայով գրական լավագույն գործերից մեկը Գեղամ Սևանի «Ներգաղթը»¹⁴ պատմվածքն է: Այնտեղ գեղարվեստական ճշմարտացի խոսքով վերարտադրված են այն հույզերն ու ապրումները, որոնք փոթորկում են Ստամբուլում բնակվող հայ երիտասարդների սրտերը:

Հետպատերազմյան տարիներն են: Թուրքական իշխող շրջանները և պաշտոնական գաղափարախոսությունը անում են ամեն ինչ, որպեսզի հայերին (ինչպես նաև հույներին և ազգային ուրիշ փոքրամասնությունների) մոռացնել տան իրենց մայրենի լեզուն, մշակույթը, ավանդությունները, ազգային ինքնությունը: Բայց երիտասարդությունը, իմանալով ներգաղթի լուրը, ամեն կերպ ձգտում է մեկնել իր հայրենիքը, վերադառնալ Հայաստան: Ահա այդ կոնֆլիկտն էլ գրվել է պատմվածքի հիմքում:

Երիտասարդների հայրենաբաղձության մասին է պատմում և Արմեն Դարյանը իր «Մի՛ր, մեր սիրելի ընկերը»¹⁵ պատմվածքում, նկարագրելով դժվարությունների դեմ տարվող պայքարի այն համառ հետևողականությունը, որ Միքին (Միքայելին), ի վերջո, հասցնում է իր անձկալի նպատակին՝ հայրենիք մեկնող նավը բարձրանալուն:

Այլ կոնֆլիկտ է ընթերցողի առջև բացվում նաև Հ. Գոշի (Զորագճյան) «Անավարտ սեր...»¹⁶ պատմվածքում. երկու սիրող սրտերի՝ Արփինեի ու Գրիգորի միջև պատենշվում է ներգաղթի պրոբլեմը: Դժվարին երկրնտրանքի առջև կանգնած Արփինեն քաջություն է ունենում վճռականություն հանդես բերելու և զոհելու իր սերը հանուն հայրենիքի, հանուն հավաքական սիրո: «—Ուրիշ բան չէ այս... հայրենի՛ք է,—ասում է նա Գրիգորին,— որուն՝ քեզի պես սիրելիները շատ սիրով կը զոհեն, ամեն երկինքին տակ...»:

Հայրենադարձի թեմայով գրված մյուս գործերը ևս ուշագրավ շատ բան ունեն իրենց մեջ: Հայրենադարձության հարցերին նվիրված մի շարք գործերում, օրինակ, հեղինակները պատկերում են այն համառ անհատներին, որոնք իրենց կարծրացած սահմանափակության կամ հայրենիքի շուրջը տարածվող թշնամական լուրերի ազդեցության տակ ոչ մի կերպ չեն կարողանում ազատագրու-

¹² «Անին», 1946, հ. 3.

¹³ Վ ա հ ե-վ ա հ յ ա ն, Խոսք ողջերթի, նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, 1950, հ. 6—7 (42—43), հ. 8 (44), 1951, հ. 9 (45):

¹⁵ «Անին» 1947, հ. 4 (16):

¹⁶ Նույն տեղում, 1948, հ. 9—10 (21—22):

վել հին նախապաշարումներից և անառարկելի փաստերի դեպքում էլ համառում են ընդունել իրենց սխալը:

«Անի» արձակը չի սահմանափակվում սփյուռքի հայկական կյանքն արտացոլող պատմվածքներով: Ամսագրի արձակի մի զգալի մասում պատկերվում են կապիտալիստական աշխարհի բարքերն ու կենցաղը, բարձրացվում են սոցիալական անարդարության ու սոցիալական պայքարի հարցեր: Դա միանգամայն համապատասխանում է ամսագրի կողմից գրականության ակտիվ դերը որդեգրելու սկզբունքներին: Մյուս կողմից՝ դա ցույց է տալիս սփյուռքահայ առաջադիմական գրականության անվիճելի աճը:

Պատմվածքների մի խումբ բուրժուական աշխարհի այս կամ այն ստվելախիտ կողմի իսկական նկարագրությունն է տալիս: Տիրապետողն այդ գործերում հեղինակների հայեցողական մոտեցումն է երևույթներին, բայց այդուհանդերձ դրանք զուրկ չեն գեղարվեստական ներգործության որոշ ուժից:

Տխեղծ բարքերի մի պատկեր է ստեղծել «Աղջնակը շուքին մեջ...»¹⁷ պատմվածքում Սմբ. Փանոսյանը, տալով հեռապատկերն այն ողբերգության, որ սպասում է դեռևս արբունքի չհասած ու «աղայի» «ողորմածությանը» ենթակա մի աղջկա: Նույն հեղինակի մեկ ուրիշ պատմվածքում («Պատուհաս»)՝¹⁸, արևելյան հետամնաց կենցաղի նկարագրության հետ մեկտեղ, տրված է և հարուստի գծծության մի տիպական օրինակ:

Սեփականատերի հոգեբանական հաջող կերպար է Վարուժան Աճեմյանի «Մտերիմ ռազմավարություն»¹⁹ պատմվածքի հերոս Սահակը, որի մեջ հարստանալու դարմանալիորեն հիվանդագին տենչ կա: Բուրժուական իրականության հարազատ պատկերն է ուրվագծված Ա. Ալիքյանի «Զհաց մեր հանապազորդ»²⁰ և Հայկ Գուլումճյանի «Մղձավանջ»²¹ պատմվածքներում, որոնք նվիրված են գործազուրկների կյանքին: Եթե առաջինում համակերպում կա և հույսի «կապույտ դրոշ» միայն, ապա երկրորդում տիրապետող մոտիվը բողոքն է, ըմբոստությունը, երբ իրականության ծանր հարվածների տակ գիտակցվում է կյանքի անիրավությունը և հնարավոր է դառնում անհատական ողբերգության միջից տեսնել ընդհանուր անարդարությունը: «Ու բաց իր ափերուն առջևն անցան անոնք որ կը խճողեն ճամփաները, իրենց անոթի զայրույթը կ'աճեցնեն պողոտաներեն: Գիտցալ թե ինք չէր առանձին: Եվ այդ մտածումին հետ՝ ուժի հոսանք մը անցավ իր մեջեն: Զգաց թե բազուկները կը պրկվեին և իր բարի ձեռքերը կը շինեին կարծր կռուփներ»:

Նույն այդ գաղափարն է համակում և Ա. Դարյանի «Երջանկությունը»²² պատմվածքի հերոսին՝ գործազուրկ գրաշարին, որի կարող բազուկները անիրավորեն անգործության են մատնվել: Որպեսզի այդ բազուկներն իրենց իրավունքին տիրանան, մտորում է պատմվածքի հերոսը, տոկունություն է պետք ու պայքար:

Ավելի լայն ընդգրկում ունի Ա. Դարյանի մեկ ուրիշ՝ «Կաղանդի գիշերը»²³

17 Նույն տեղում, 1948, հ. 1 (25):

18 Նույն տեղում, 1948, հ. 11 (23):

19 Նույն տեղում, 1951, հ. 9 (45):

20 Նույն տեղում, 1947, հ. 11:

21 Նույն տեղում, 1949, հ. 3 (27):

22 Նույն տեղում, 1948, հ. 12 (24):

23 Նույն տեղում, հ. 9—10 (21—22):

պատմվածքը: Հիմնականում դա մի ֆրանսուհու՝ տիկին ժյուլիեթի ձախողված կյանքի տխուր պատմությունն է, որ անում է նա նոր տարվա գիշերը (մի տեղ, Մերձավոր Արևելքում), սեղանի շուրջը հավաքված հայ երիտասարդներին: Տիկին ժյուլիեթը հանգում է այն եզրակացության, որ ապրելը պարտականություն չէ միայն, այլև ամեն անհատի իրավունքը:

Հետաքրքիր է պատմվածքում այն զուգահեռը, որ անց է կացնում հեղինակը հայ երիտասարդների ու նրանց սեղանակից դարձած ժյուլիեթի միջև: Այն դեպքում, երբ վերջինս հրաժարվում է իր հայրենիքը՝ Ֆրանսիա վերադառնալու մտքից (ուր նա այնքան դառնություն է տեսել), հայ երիտասարդների համար երջանիկ ապագայի միակ հույսը է՝ և մնում է իրենց սիրելի հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Սոցիալական թեմային և բուրժուական բարքերի պատկերմանն ամսագրում տպագրած իր պատմվածքներում հաճախ է անդրադառնում արձակագիր Գեղամ Սևանը: Սեղմ են, դիպուկ ու պատկերավոր նրա պատմվածքները: Ֆուրաքանչյուրը դրանցից կյանքն ինքն է, նրա կենդանի մի բեկորը իր ուրույն կոլորիտով, իր մարդկանցով ու ապրումներով, սերերով ու տառապանքներով: Եվ որովհետև այդ պատմվածքների նյութը վերցված է սեփականատիրական աշխարհի ամենահետամնաց ու հետադեմ անկյուններից մեկի՝ Թուրքիայի առօրյայից, որտեղ ծնվել է հեղինակն ու անցկացրել իր երիտասարդության ամենից ավելի տպավորվող տարիները, ապա նրա գործերում գերակշռում են անարև կյանքի ու տառապանքի պատկերները: Այդպիսին են «Ակդեոր Հասանը»²⁴, «Մուրազը»²⁵, «Հազարին կեսը»²⁶, «Գործողության մը փոխարժեքը»²⁷ պատմվածքները:

Շահագործման, խաբեության, մութ արարքների և կեղտոտ բարքերի պատկերն են պարզում մեր առջև նրա մյուս պատմվածքները, մանավանդ «Ունեկորության տուրքը»²⁸: Դրանցում բացահայտվում է ազգային խտրականության այն արգահատելի վարքագիծը, որ բնորոշ է թուրքական պետական շրջաններին և այդ քաղաքականության հետևանքով նացիոնալիզմի թույնով վարակվածներին:

Թուրքական իրականության ընդհանուր մոայլության մեջ էլ, սակայն, կան լուսավոր կետեր, և դա լավ Մուստաֆան է՝ կյանքի ու ճշմարտության իր սիրով, պայքարով ու ապագայի իր անընկճելի հավատով²⁹:

Այդ լուսավոր դեմքերից են և այն ազատասեր երիտասարդները, որոնց պատկերել է Գ. Սևանը իր «Սև ծովը նույնն է միշտ»³⁰ պատմվածքում՝ պաշտոնական, կեղծ, ոստիկանական «հայրենասիրությանը» հակադրելով երիտասարդ, առաջադեմ թուրք երիտասարդների մաքուր, իսկական հայրենասիրությունը:

Գ. Սևանի պատմվածքները ամսագրի արձակի ամենահաջող էջերից են³¹:

²⁴ Նույն տեղում, 1950, հ. 4—5 (40—41),

²⁵ Նույն տեղում, հ. 8 (56),

²⁶ Նույն տեղում, 1952, հ. 9 (57),

²⁷ Նույն տեղում, 1954, հ. 3 (63),

²⁸ Նույն տեղում, 1952, հ. 11—12 (59—60),

²⁹ Նույն տեղում, 1950, հ. 2 (38),

³⁰ Նույն տեղում, 1952, հ. 3 (51) և հ. 4—5 (52—53),

³¹ «Անին» իր համարներում տպագրել է Գ. Սևանից տասներեք պատմվածք, որոնք կարող են մի ծավալուն հատոր կազմել: Դրանց մի մասը ամսագիրը լույս է ընծայել առանձին

«Անին» իր գեղարվեստական արձակի մի քանի այլ գործերում անդրադառնում է իմպերիալիզմի վարած քաղաքականությանը՝ գաղութային և կիսանկախ երկրներում, և ռասիզմի հարցերին:

Ֆրանսիական իմպերիալիստական շրջանների ոտնձգություններին է նվիրված Մ. Տեր-Ստեփանյանի «Փախ փախը՝ մահվան առջև»³² պատմվածքը: Այս և արձակի մի շարք այլ գործեր շեշտված հրապարակախոսական բնույթ ունեն, որը որոշ իմաստով ավելի է շեշտում ամսագրի որդեգրած սկզբունքը: Պատմվածքի նյութը Սիրիայում, պատերազմի ավարտից հետո տեղի ունեցած արյունալի դեպքերն են: «Երրորդ Հանրապետության կայսերապաշտ ավանդություններուն մնացորդացը կը կարծեր թե այս երկիրին մեջ ունեւր քաղաքական, ղինվորական, մշակութային ու տնտեսական դիրքեր... Ուստի կը փորձեր նահանջել հետո բռնի ուժով վերագրավել հին դիրքերը, և կը դներ ժամանակավրայ պահանջներ»: Ֆրանսիական իմպերիալիզմը մենակ չէր այդ գործում: «Աղվեսամիտ երրորդ կողմն ալ,—շարունակում է հեղինակը,— ձեռքի տակ քարյուղ կը սրսկեր արդեն բոցավառիլ սկսող կրակին վրա...»:

Պատմվածքի մեջ իմպերիալիստական այդ ոտնձգություններին հակադրված է այն համերաշխությունը, որ ընդհանուր վտանգի հանդեպ ստեղծվում է արաբների ու Սիրիայում ապրող մյուս ժողովուրդների միջև: «Ցեղի, կրոնի, ավանդություններու և նախապաշարումներու ստեղծած խտրությանց բոլոր պատենշները կը փլչին, կը քանդվին մեկ անգամեն... «Պապա՛, հա՛ց» ճշացող պղտիկիս անոթությունը կը կշտանար դրացի արաբին ղրկած հաց ու պանիրով»:

Երկու պատմվածք ամսագրում (Տ. Վարժապետյանի «Աբրահամ Լինգրեն-Կրինը և Պլեքին»³³ ու Սուրեն Մանվելյանի «Գոչումին տեր բժիշկը»³⁴ պատկերում են ռասսայական խտրականության այն ամոթալի երևույթները, որ մինչև հիմա էլ դեռ գոյություն ունեն Ամերիկայում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի իրադարձություններին վերաբերող արձակ գործերը «Անիում» քիչ են, թեև պատերազմին արձագանքող բազմաթիվ այլ նյութեր կան:

«Անիում» տպագրված մի քանի պատմվածքներ իրենց թե՛ բովանդակությամբ և թե՛ ձևով չեն ներդաշնակում ամսագրի առողջ ոգուն: Դրանք են՝ Բյուզանդ Նդիայանի «Վերջին շառավիղ»³⁵ ու «Մեր կորուստները՝ մեր պետութենեն» պատմվածքները³⁶:

«Վերջին շառավիղը» դժբախտ սիրո և այդ սիրո պտուղ, լքված մի աղջկա ողբերգության պատմություն է: Մեզ հետաքրքրողը, սակայն, այդ պատմությունը չէ, այլ այն, որ վերագնահատման ենթարկելով հայ ամիրանների դերը մեր պատմության մեջ, հեղինակը հակազիտական դիրքերից է լուսարանում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները:

գրքով, տարով հատորին «Սև ծովը նույն է միշտ» խորագիրը (Մատենաշար «Անի» ամսագրի, հ. 7, Բեյրութ, 1954):

³² «Անի», 1947, հ. 3 (15):

³³ Նույն տեղում, 1952, հ. 10 (58):

³⁴ Նույն տեղում, 1950, հ. 1 (37):

³⁵ Նույն տեղում, 1948, հ. 7 (19) և հ. 8 (20):

³⁶ Նույն տեղում, 1949, № 3 (27):

Հստ Բ. Եղիայանի, «օսմանցի հայերը ապերջանիկ չէին ամիրաներու այդ օրերուն: Երկիրը մերը չէր, բայց անոր վաճառականությունը և վերելքը մերն էր,— գրում է նա ու ապա շարունակում, թե՛ ...Մեր ամիրաները հինգլուխ բայց հիանալի վարիչներ էին... Մենք սակայն մեր նոր գլուխ մարզերը հառաջ քշեցինք, և անոնք կրցան մեր ամիրաները կոչել դավաճաններ, և մեկ առ մեկ վար առին դանոնք ազգին աթոռներեն, անոնց տեղը դնելով սկզբունքներ ու վարդապետություններ»:

Մեր թեմայից դուրս է «օտար տունները հայկական կլիմայում» աճեցնելու հին տեսության քննադատությունը: Հայտնի է, որ հեղափոխությունները չեն արտածվում կամ ներմուծվում: Հայտնի է նաև, որ հայ ազատագրական շարժումը իր խոր արմատներն ուներ ժողովրդի մեջ և ուղղված էր վայրագությունների, դաժան բռնությունների, սովորական դարձած թալանի՝ թուրքական ղեսպոտիզմի դեմ:

Այլ հարց է, որ իմպերիալիստական պետությունների դիվանագիտական խաղերը, միջազգային աննպաստ պայմանները, տերիտորիալ մասնատվածությունը ի դերև հանեցին հայ փոքրամիջակ ժողովրդի թափած մեծ ճիգն ու առատ արյունը: Այլ հարց է, վերջապես, որ հայ ազգայնական որոշ խմբակցությունների և մասնավորապես դաշնակցության արկածախնդրական գործելակերպը հաճախ ողբերգական տարր էր մտցնում այդ շարժման մեջ կամ ողբերգության հասցնում ժողովրդին: Սակայն արևմտահայության այդ ողբերգությունը բացատրել ամիրայական դասի բացակայությամբ և ցավել դրա համար, առնվազն անհեթեթություն է, որ կարող է արտահայտել հայ ազատագրական պայքարի շարժիչ ուժերին անտեղյակ, հետադիմական մտայնությամբ վարակված մի հեղինակ:

«Անին» տպագրել է խոշոր ծավալի երկու գործ՝ Վահե-Վահյանի «Հարալեղներու հաշտությունը» հայրենական հուշերը և Ս. Փանոսյանի «Որ մրրկավ էին զատված» վեպը³⁷:

«Որ մրրկավ էին զատված» վեպի թեման 1915-ի եղեռնն է և հայ մարդու ճակատագիրը՝ սկսած ազատագրության տարիներից մինչև երկրորդ համաշխարհային պատերազմն ու դարձր Սովետական Հայաստան:

Տիրապետության տասնյոթամյա Մուրադին հայրն ուղարկել էր մեծ քաղաք, ուսում ստանալու: Երիտասարդի վերադարձը դեպի հայրենի տուն զուգահեռապես է եղեռնի սկզբին: Հազիվ աղատվելով սպանդից, երկար թափառումներից հետո, նա հասնում է սիրիական անապատի բեդվինների վրաններին, որտեղ և պատսպարվում է: Այստեղ էլ նա դրսևորում է իր խիզախությունը, մանավանդ թուրքական սպառնալիքի չոկատների հետ տեղի ունեցած ընդհարումների ժամանակ: Նա դառնում է՝ Շեյխ Խալաֆից հետո՝ երկրորդ անձնավորությունը ցեղախմբում: Այդ ընթացքում Շեյխ Խալաֆի մարդիկ թուրք ոստիկանների ձեռքից ազատում են մի մեծ խումբ հայ կանանց ու երեխաների, որոնք նույնպես ապաստան են գտնում Շեյխի վրաններում: Նրանց ապահովության գործում մեծ դեր է խաղում Մուրադի հեղինակությունը:

³⁷ Այն տպագրվել է ամսագրի 1950—1952 թվականների 21 համարներում, արժանացել է «Անի» գրական մրցանակին և ապա, 1953-ին, լույս է տեսել առանձին գրքով Բեյրութում, «Անի» հրատարակչության կողմից (մատենաշար թիվ 5)։

Յոթ տարի անց, պատերազմի վախճանից հետո, հայ գաղթականների խումբը և Մուրադը, Շեյխ հալաֆի համաձայնությամբ, թողնում են բեդվիններին ու մեկնում Հալեպ, միանում արևմտահայության մնացորդներին:

Անցնում են նորից տարիներ: Փոթորկվում ու ավարտվում է երկրորդ համաշխարհային պատերազմը: Այն, ինչ չի վիճակվում Մուրադին, ճակատագիրը պարզեցնում է արաբական անապատում ծնված նրա որդուն, որին, իր սերնդակիցներից շատերի հետ, հաջողվում է վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան:

Ահա վեպի համառոտ բովանդակությունը: Նրա վերջավորությունը շատ սխեմատիկ է, դեպքերը հաջորդում են միմյանց կալեյդոսկոպային արագությամբ, ավարտվելով հայրենիք մեկնելու տեսարանով: Նոր չէ նաև թեման: Արդեն 1949-ին, լույս էր տեսել Լևոն Մեսրոպի համանման սյուժեով «Կախարդող լեռը և ներգաղթող ձին» վեպը: Վեպում լավ է պատկերված արաբ վաշկատուն ցեղախմբի՝ բեդվինների կյանքն անապատի պայմաններում, նրանց ծանր աշխատանքն ու մաքառումը չափից ավելի ժլատ բնության դեմ: Հեղինակի հաջողությունն է, անշուշտ, որ Շեյխ հալաֆի մարդկանց արիասիրտ լինելու հետ միաժամանակ ցույց է տալիս նրանց արդարամտությունն ու աշխատասիրությունը: Հետաքրքիր են նաև բեդվինների կյանքի որոշ կենցաղային նկարագրությունները: Ընդհանուր առմամբ Փանոսյանին հաջողվել է ուրվագծել այն իրադրությունը, որ ստեղծվել էր արաբական անապատի մի անկյունում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Ծիշտ է մտահղացված ու տրամաբանական է վեպի կոմպոզիցիան, թեև նրա ոչ բոլոր օղակներն են իրենց մարմնավորման գեղարվեստական ճիշտ ուղին գտել: Համոզիչ չէ, օրինակ, և օբյեկտիվ ճշմարտությունների վրա չի հիմնվում Մուրադի գլխաւորությամբ վերելքը փախստական հայից մինչև Շեյխի վեզիրը և այդ կապակցությամբ Հասանի (նախկին վեզիրի) յանկումը: Նրա դիրքը ավատական ու կրոնական նախապաշարումներից չազատագրված բեդվինների մոտ մնում է շատ խնդրական:

Թույլ են լուսաբանված արաբական ցեղախմբերի ու թուրքական իշխանությունների հարաբերությունները և հիմնավորված չէ արաբների ատելությունը վերջինների հանդեպ, թեև ռստ վեպի կառուցվածքի արաբ-թուրք հարաբերություններն առանցքային պիտի լինեն: Եթե այդ հարցը պատշաճ գեղարվեստական հիմնավորում գտած լիներ, ապա ավելի հասկանալի կլինեին բեդվինների ու մասնավորապես Շեյխի ու Հասանի ջերմ վերաբերմունքը հայերի նկատմամբ: Դա ավելի կհիմնավորեր նաև արաբների ու թուրքական պատժիչ ջոկատների բախումը, որը պատկերանում է ավելի շուտ որպես հայերի նկատմամբ բեդվինների բարյացակամության մի ակտ, քան արաբ ժողովրդի ազատագրական պայքարի մի դրվագ:

Վեպի գլխավոր հերոսները, որպես գեղարվեստական կերպարներ, նույնպես դերծ չեն լուրջ թերություններից: Ամբողջական չէ Շեյխ հալաֆի կերպարը: Մուրադի՝ որպես վեպի հիմնական հերոսի ու գլխավոր կերպարի՝ զարգացումը շատ ավելի արագ է տեղի ունենում, քան այդ թույլ են տալիս դեպքերը իրենց բնական, օբյեկտիվ դարգացման մեջ: Անգույն ու սխեմատիկ է հալեպ աղան (թուրքերի գործակալը արաբների մեջ):

Ռեալիստական վեպից պահանջվում է, որ այն ճշմարտապատում լինի նաև իր մանրամասների մեջ: Այդպես չէ Փանոսյանի վեպում: Նատուրալիստա-

կան մեղանշումներից բացի, կան մի շարք անհարիրություններ ժամանակի, տեղի, տարածության, դեպքերի հաջորդականության մեջ: Մասնավորապես պատվաստի տպավորություն են թողնում բեղվիներին շատ հեշտությամբ նստակյաց դարձնելու, ջրանցք կառուցելու, վար ու ցանքսի սովորեցնելու Մուրադի հաջողությունները: Առհասարակ Մուրադի՝ որպես կենտրոնական հերոսի՝ բեղվիների կյանքում կատարած դերի գերազնահատությունը զգացվում է վեպի համարյա ամբողջ ընթացքում և աններդաշնակության զգալի տարր է մտցնում երկի մեջ:

Այս բոլորով հանդերձ, Մ. Փանոսյանի վեպն ունի իր անժխտելի արժանիքները և ընթերցվում է հետաքրքրությամբ, որ խոսում է հեղինակի գեղարվեստական մտածողության ու պատմելու ձիրքի մասին: Երկի դրական կողմերի հաշվին պետք է գրանցել նաև այն հայրենասիրական ոգին, որով տոգորված է ամբողջ վեպը:

«Հարալեզներու հաշտությունը»³⁸ հայրենական հուշեր են: Դրանք պատկանում են «Անիի» խմբագրի գրչին և արդյունք են հեղինակի հայրենիք կատարած առաջին այցելության՝ որպես Հայաստանի սովետական գրողների երկրորդ համագումարի հյուր:

Սփյուռքահայ գրողների հայրենական տպավորությունները մեծ նպաստ են բերել գաղութահայ աշխատավորների հայրենասիրության դաստիարակման գործին: «Հարալեզներու հաշտությունը» այդ հուշագրությունների մեջ լավագույններից է. այն դրված է գեղեցիկ, պատկերավոր լեզվով և հայրենասերի անկեղծ ու ջերմ զգացմունքներով:

Հայաստանում կատարած իր բոլոր շրջագայությունների, հանդիպումների, գրույցների մեջ Վահե-Վահյանը հանդես է բերում անհազ հետաքրքրություն դեպի իր հայրենիքը ու նրա մարդիկ, դեպի նրանց աշխատանքն ու կենցաղը, մտածումներն ու երազանքները: Նա աշխատում է թափանցել բոլոր երեւոյթների խորքը, համեմատություններ ու ընդհանրացումներ է անում, արտահայտում իր կարծիքներն ու խոհերը տեսածի ու զգացածի մասին:

Հայրենիքում ամեն ինչ խոր, անմոռանալի տպավորություն է թողել նրա վրա և, ամենից առաջ, պետականորեն կազմակերպված ժողովրդի ծրագրված, նպատակասլաց աշխատանքը երկրի վերակառուցման այլևայլ բնագավառներում: «Հայրենական կյանքի բոլոր մարզերուն, արդյունաբերական, շինարարական, իմացական ու վարչական բոլոր ձեռնարկումներուն մեջ,— գրում է Վահե-Վահյանը,— մարդիկ կը մտածեն ու կը գործեն պետական շափանիշով, իր ճակատագիրը շինող ուժերը սանձահարած և ապագային վստահությամբ նայող ժողովրդի մը զավակներուն կամքովն ու հավատքովը»:

Հեղինակը մեծ ոգևորությամբ է խոսում այն բոլոր նվաճումների մասին, որ նա տեսնում է հայրենիքում, բերում է թվական տվյալներ, պատմում ու նկարագրում է սիրով, բանաստեղծական շունչ դնելով իր ասածների մեջ:

Առանձին ներշնչանքով է խոսում Վահե-Վահյանը մեր երկրի մշակութային կյանքի մասին, նկարագրում այն ջերմ վերաբերմունքը, որ ցուցաբերում են սովետական մարդիկ մեր անդյալի ժառանգության հանդեպ, պատմում է մեր թանգարանների, այնտեղ կուտակված արժեքների և մանավանդ նրանց

³⁸ Տպագրվել է ամսագրի 1946—1950 թվականների համարներում, ապա լույս է տեսել առանձին գրքով Բելյուսթում, 1953-ին («Անի» մատենաշար, թիվ 6):

գիտական ուսումնասիրման խելացի կազմակերպման մասին: Ժողովրդական կրթության ու գիտության զարգացման լայն դրվածքը մեր երկրում նույնպիսի ոգևորություն է պատճառում Վահե-Վահյանին: Գիտությունների ակադեմիայի մասին խոսելիս, օրինակ, նա ասում է, որ այն պատիվ կարող է բերել ոչ միայն բունության լծից նոր ազատագրված մեր ժողովրդին, այլև «հառաջացած մշակույթով որևէ ժողովուրդի»:

Իր հուշերում Վահե-Վահյանը, որպես բանաստեղծ, բնականաբար մեծ տեղ է հատկացնում մեր գրականությանը և նրա մշակներին, խոսում է մանրամասնորեն գրողների համագումարի ու այնտեղ արծարծված հարցերի մասին:

Շատ ուշագրավ է Վահե-Վահյանի հանդիպումն ու զրույցը Դ. Դեմիրճյանի հետ, որի ընթացքում շոշափվում են բաղամպիսի հարցեր, այդ թվում և 1915-ի արյունալի իրադարձությունները գրականության մեջ լայնորեն արտացոլելու հարցը:

«Գրեցե՛ք, թող կարդան ու շմուռնան մեր զավակները, մեր հետնորդները,—ասում է Դ. Դեմիրճյանը:—Թող լսի և ո՛ղջ աշխարհը, եթե ունի ականջ: Եվ դա կարևոր է՝ ոչ միայն աղգայի՛ն, այլև մարդկային տեսակետից: Ես հոգով հավատում եմ ու ցանկանում մարդկային եղբայրության: Բայց եղբայրություն առանց արդարության—չի՛ լինի...»:

Հուշերի մեջ Վահե-Վահյանը պատմում է նաև իր հանդիպումների մասին հայրենադարձների հետ: Նրանք շատ են. կան ընկերներ, գրչակիցներ, կան և իր նախկին աշակերտներից: Պատմում են նրանք հայրենիքի, իրենց նոր կյանքի, իրենց աշխատանքի ու հեռանկարների մասին: Վահե-Վահյանը այդ հանդիպումներից հանգում է այն եզրակացության, որ «Ամբողջ երկիրը ցնցող աշտանքի և հառաջադիմության տենդը անցեր էր նաև իրենց (հայրենադարձներին)»։ Նրանք «...գիտեին հայրենիքին սերը չշփոթել դյուրակեցության բաղձանքին հետ», չհաշված այն անհատներին, որոնք «Հայրենիքը երևակայեր էին վայր մը անաշխատ վայելքի»:

Վահե-Վահյանի հուշերը կազմում են մոտ 500 էջանոց ստվարածավալ մի դիրք: Այն մեր հայրենիքն է՝ դիտված սփյուռքահայի աչքերով, նրա խորհրդածություններով՝ հայ ժողովրդի, նրա անցյալ ճակատագրի և այսօրվա իրականության մասին: Եվ այդ բոլոր մտքերը դալիս, խաշաձևվում են մի կիզակետում՝ որպես եզրակացություն, որ արտահայտված է հեղինակի հետևյալ խոսքերում՝ ասված Հայֆիլհարմոնիայում լսած համերգի թարմ տպավորության տակ.

«Զգայական ու մտավոր հրճվանքի այդ ըույսն կը փոխադրեր զիս քսանվեց տարի ետ, ուր վերջին մնացորդը հայու վիրավոր հոգիին՝ դրված էր գլխատման կոճղին. ու եթե չհասնեին փրկարար ձեռքեր, պատմության անզգամ էջերուն ու դանոնք հորինող ապառաժ խղճմտանքներուն վրա պիտի մնային միայն սառն ու սև հետքեր արյունի՝ այդ հոգիեն վերջին անգամ ցայտած: Եվ այն ատեն, ո՞ւր պիտի մնային աս հրաշալի ձայները, ո՞ր անդունդին մեջ սողված և անմակաբերելի: Այդ ձեռքերուն հրաշքը չէ՞ր, որ դավանափոխ մեր ժողովուրդին դեմ բաղամաղարյան գժտութենն մը հետո՝ հաշտեցուցեր էր վերջապես Հարալեղները մեզի հետ: Լիզեր ու դարմաններ էին անոնք մեր վերքերը, ու վերանորոգ մեր հոգին հիմա կը բաշխվեր աշխարհին՝ իբրև բացրագույն նվագ...»:

Դրամատիկական ժանրի երկու ինքնուրույն գործ է տպագրել ամսագիրը՝ Պետրոս Զարոյանի «Մենք ալ հայրենիք ունինք»³⁹ թատերախաղի առաջին արարը և Պարույր Մասիկյանի «Որբուհին խաչը»⁴⁰ պիեսը՝ ամբողջությամբ։ Երրորդ գործը, որ արդեն թարգմանական է և ամսագրի գիրքը բնութագրող, Կ. Սիմոնովի «Ռուսական հարց»-ն է։

Պ. Զարոյանի թատերախաղի մասին՝ դատելով տպագրված հատվածից, դժվար է ամբողջական եզրակացության հանգել։ Սակայն այդ արարն էլ ցույց է տալիս, որ այն հետաքրքիր պիեսի սկիզբ է, հետաքրքիր այն առումով, որ արժարժում է սփյուռքահայության կյանքի հետ առնչվող հասարակական հարցեր։

Պ. Մասիկյանը իր պիեսի առանցքը դարձրել է անապատի ավազուտներից փրկված որբուհիի՝ Արմենուհու անողորմ ճակատագիրը, որ կարծես հետապնդում է նրան իր ամբողջ կյանքի ընթացքում։ Նրա և Արմենի անկեղծ սերը ավարտվում է անհաջողությամբ, զոհ դառնում սեփականատիրական աշխարհի հոռի բարբերին։ Փրկությունը հայրենիքն է, ուր և ուղղում է իր հերոսին հեղինակը։

Ամսագրում տպագրված հեքիաթների թիվը շատ չէ, ընդամենը տասը՝ վեցը ժողովրդական, զրի առնված Տիգրան Զիթունու կողմից։ Սակայն այդ հեքիաթների մեջ ակներև է իր՝ Տ. Զիթունու եռանդուն միջամտությունը, մի հանգամանք, որ զգալիորեն իջեցնում է նրանց բանահյուսական արժեքը։

«Անին» իր էջերում լայն տեղ է հատկացրել սովետահայ հեղինակներին։ Զկա ամսագրի մի համար, որտեղ սովետահայ գրողները հանդես եկած չլինեն պատմվածքներով, բանաստեղծություններով կամ հոդվածներով։ Իր այդ աշխատանքով «Անին» խոշոր ծառայություն է մատուցել սփյուռքահայ ընթերցողներին ու գրական մտքին։ Այդ միջոցով ամսագիրը պրոպագանդել է սովետահայ գրականության նվաճումները հայկական գաղութներում։

Ջանազան առիթներով «Անին» բազմիցս անդրադարձել է հայրենիքի և սփյուռքի մշակութային կապերի հարցերին, ընդգծելով, որ սփյուռքը կարող է ավելի երկար պահպանել իր լեզուն ու մշակույթը և կերտել իր գրականությունը, եթե մշտական ու սերտ հաղորդակցության մեջ լինի հայրենիքի հետ, իր ներշնչումը, մղումն ստանա հայրենիքից։ Իր հոդվածներից մեկում⁴¹ Վահե Վահանը այդ հարցի կապակցությամբ գրում է. «Մինչև հայրենի հողին վրա միաձուլված մե՛կ ժողովուրդի և մե՛կ ցրակասության իդեալին ամբողջական իրականացումը, պանդուխտի ճակատագիրով մեր երկնվող մեր գրականությանը կեցուցիչ միակ ույժը կրնա բխիլ մայր երկիրի մեր ժողովուրդեն և անոր մշակույթին հետ խորունկ, աննախապաշար ու սրտբաց հաղորդակցութենե մի։ Ահավասիկ դավանանքը և ուլին անոնց որ կը հավատան հայրենիքին»։

Այդ մտահոգությամբ էլ «Անին» մոտեցել է սովետահայ հեղինակների գործերի տպագրության հարցին։ Կարելի է, իհարկե, վիճել այս կամ այն գործի ընտրության շուրջը, սակայն դա էական չէ տվյալ դեպքում։ Կարևորն այն է, որ ամսագիրը ջանք չի խնայել իր ընթերցողներին լայնորեն ծանոթացնելու սովետահայ հեղինակների ստեղծագործություններին։

³⁹ «Անին», 1953, հ. 1 (61)։

⁴⁰ Նույն տեղում, 1952, հ. 4—5 (52—53), հ. 6—7 (54—55)։

⁴¹ Նույն տեղում, 1946, հ. 8—9։

Ավելի քան քսանհինգ սովետահայ գրողներ են ներկայացված ամսագրի արձակի բաժնում: Նրանց պատմվածքներն ու գեղարվեստական ակնարկները օգնել են սփյուռքահայ ընթերցողներին ոչ միայն շփուրվելու հայրենի ժամանակակից գրականության հետ, այլև ճանաչելու Սովետական Հայաստանը, ծանոթանալու սովետական մարդկանց աշխատանքին ու կենցաղին, նրանց ապրումներին ու մտորումներին: Այդ գործերի թվում հիշենք Արաղու «Ալեքը» պատմվածքը, Դ. Դեմիրճյանի, Հր. Քոչարի, Գ. Սևունցի, Բ. Սեյրանյանի պատմվածքներն ու ակնարկները, Վ. Անանյանի «Ուշացած խոստովանություն» ու որսորդական մի քանի պատմվածքները, Ն. Զարյանի «Հացավան» և Վ. Անանյանի «Սեանի ափին» վեպերից վերցրած հատվածները և այլն:

«Անիում» տպագրված սովետահայ պատմվածքների մի ուրիշ խումբ արտացոլում է Հայրենական մեծ պատերազմի դրվագները և հայ մարտիկների սխրանքները: Դրանցից են Ստ. Զորյանի «Մայրը», «Որդին», «Սերոբը», «Աղավինները» պատմվածքները, Ինչպես և Արաքսի, Սիրասի, Հր. Քոչարի, Վ. Խելունյանի, Գ. Սևունցի, Բ. Սեյրանյանի, Հ. Մկրտչյանի և ուրիշների արձակ գործերը:

Մի շարք դեպքերում ամսագիրը սովետահայ արձակագիրներին ներկայացրել է գրախոսականների միջոցով, տպագրելով քննարկվող գրքից այս կամ այն գործը կամ առանձին հատվածներ:

Սովետահայ արձակը, այսպիսով, ղղալի բաղմագանություն ու թարմություն է մտցրել «Անիում», ճոխացնելով ամսագիրը թե՛ իր բովանդակությամբ և թե՛ արվեստով:

Ամսագիրը անդրադարձել է և մեր դասական գրողներին (Խ. Աբովյան, Հովհ. Թումանյան, Ալ. Շիրվանզադե), հորեկյանական կամ նշանավոր տարեթվերի առիթով առանձին վերբաժավալ գործեր տպագրելով նրանց ստեղծագործություններից:

«Անին» արձակի իր էջերը հարստացրել է նաև միջազգային՝ ռուս և այլ ժողովուրդների գրականության լավագույն նմուշներով: Այդ մասին ընդհանուր գաղափար տալու համար բավական է թվարկել այն գլխավոր գործերից մի քանիսը, որ տպագրել է ամսագիրը իր տարբեր համարներում: Այսպես, «Անին» տպագրել է Մ. Գորկու «Մրրկահավի երգը» և «Դանկոյի սիրտը» («Պառավ Իդրդիլը» պատմվածքից), հատվածներ Ն. Գոգոլի «Մեռած հոգիներից», Կ. Սիմոնովի արդեն հիշատակված «Ռուսական հարցը» (ամբողջովին, Վահե Վահյանի թարգմանությամբ), մի գլուխ («Հրամանատարները») Վ. Գրոսսմանի «Ժողովուրդն անմահ է» վեպից և այլն: Արաբական դրականությունը ամսագրում ներկայացված է էլ Աֆղանի, Րաիֆ Խուրի, Ա. Րիհանի, Ա. Իսհակի և ուրիշ հեղինակների արձակ էջերով: Արևմուտքի նշանավոր գրողներից ամսագիրը տպագրել է Բալդակի «Անծանոթ գլուխ գործոցը», է. Հեմինգուեյի «Մարգասպանները», Վ. Սարոյանի «Պատերազմը» և առանձին հատվածներ Զ. Ստայնբեկի, Բ. Շոուի, է. Սինկլերի, Ս. Լյուիսի և ուրիշների երկերից:

«Անին» հարատևել է միայն տասը տարի, այն էլ ընդմիջումներով: Սակայն այդ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում էլ նա ղղալի դեր է կատարել ու նշանակալից հետք թողել սփյուռքահայ գրական կյանքում, հանդիսանալով արտասահմանի հայ առաջադիմական պրուական մամուլի լավագույն օրգաններից մեկը:

ПРОЗА ЖУРНАЛА «АНИ»

М. А. Баблюян

(Р е з ю м е)

В 1946—1955 гг. в Бейруте (Ливан) издавался литературно-художественный журнал «Ани» под редакцией известного поэта и общественного деятеля Ваэ-Вагяна. Журнал отражал литературно-эстетические взгляды передовой общественности зарубежных армянских колоний.

Проза журнала состоит главным образом из рассказов. Тематика их разнообразна. В них отражена жизнь зарубежных армян, социальный гнет капиталистического мира, проблема ассимиляции армян. Одна из основных тем рассказов—репатриация армян на родину, в Советскую Армению.

В статье показана, что проза «Ани» реалистична и правильно отражает явления жизни капиталистического общества, демократические стремления трудящихся армян и их любовь к своей родине.

Значительное место в прозе «Ани» занимали произведения советских армянских писателей, а так же русских и зарубежных классиков и современных авторов.